

երկու կյոռ պատուհաններ: Հիւսիսային կողմը մի մատրածե խորան, իսկ հարաւային կողմը երկու ամբողջական և երկու կիսասիւնները վրայ հաստատուած դմբէթաւոր գաւիթը:

Վանքը շրջապատուած է հաստ պարսպով, որի մէջ կան խցերի աւերակներ: Ոչ մի տեղ ոչ մի արձանադրութիւն չկայ: Համբարձման տօնին ահագին բազմութիւն ուխտ է դալիս այստեղ:

Սրանից կէս վերտ հեռու, դէպի հարաւ, մի ժայռոտ բլրի վրայ կայ մի բարձր շէնք, որի առաստաղը քանտուելով՝ կիսով չափ լցրել է մէջը: Սրա մասին ոմանք ասում են, թէ դանդակատուն է, ոմանք էլ՝ թէ բերդ է:

Բ. Վ Ր Ա Յ Վ Ա Ն Զ Ե Ր

Այս դաւառում վրացիներն էլ ունին թէ ճարտարապետութեամբ և թէ պատմական անցեալով նշանաւոր վանքեր, որոնց մէջ իւր ճարտարապետութեամբ գերազանցում է բոլորին Ախտալայի ս. Աստուածածնի վանքը, իսկ պատմական անցեալով Բոլնիսի Սիօնը, որ երկար ժամանակ առաջնորդանիստ է եղել: Այս վանքերն էլ ժամանակազրական կարգով այսպէս են դասաւորոււմ.

- | | |
|--|---|
| 1. Ախտալայի | Հիմնուել է V և ապա XII դ. Իւանէ աթարէկի ձեռքով: |
| 2. Սիօն | V. դարում, Փարսման թագաւորի կամ Արչիլ թագաւորի որդի Միհրդատի կին Սագուխտի ձեռքով: |
| 3. Ծուղրուդաեկն. | XV դ. Աբսէնի որդի Ալանի ձեռքով: |
| 4. Երկու անյայտ մեհաստաններ. XV. դարում. | |
| 5. Հնէվանք. | անյայտ. |

Սկսենք նկարագրել այս կարգով.

ԱՅԳԱԼՍԻ ՄԱՐԻԱՍ ԱՆԱՅԻ ՎԱՆԵ

Այս հռչակաւոր և ճարտարարուեստ վանքը գտնուում է Ախտալա կայարանից հազիւ 1¹/₂ վերստ հեռաւորութեամբ, դէպի արևմուտք, անտառապատ ժայռերով պատած մի թերակղզիաձև բլրակի գոգում. պղնձի և այլ հանքերով հարուստ Լալվար լեռան լանջին:

Այս վանքի մասին կան հետևեալ պատմական տեղեկութիւնները: Կիրակոս Գանձակեցին ասում է. «Վախճանեցաւ և Իւանէ ¹⁾, եղբայրն Զաքարէի և Թաղեցաւ ի Պղնձահանքն, ի դուռն եկեղեցւոյն՝ զոր շինեաց ինքն, առեալ ի Հայոց վրացի վանս արար: ²⁾»

Ստեփաննոս Օրբելեան ³⁾ պատմում է, թէ այս վանքում պահուում էր Ս. Նշանի խաչը, որ Իւանէ Աթաբէկը ընծայ էր ստացել Վասակ իշխանից: Բայց լետոյ 1216 թուին Տէր Սարգսի խնդրով վերադարձուեց Նորավանքի ուխտին:

Նաև նոյն մատենագրից յայտնի է, որ ղեռ Իւանէի կենդանութեան ժամանակ այստեղ ծինմծղաւրութիւն (առաջնորդութիւն) էր հաստատուած և «Ծիրամ ծղճարն Պղնձահանիցն» մասնակցում էր այն ժողովին, որ որոշեց, թէ վերոյիշեալ Ս. Նշան խաչը պատկանում է Լիպարիտ Օրբելեանին: Վարդան Բարձրբերդցին և Կիրակոս Գաձ. պատմում են, որ 1250 թուին մեռաւ Աւագն, որդին Իւանէի և Թաղեցաւ ի Պղնձահանքն ընդ Հօր իւրում: ⁴⁾

Վրաց մատենագիրներից Թաղաթառանդ Վախուշտն ասում է. Հաղբատից ցած գտնուում է Ճոճկանի հովիտը, Լալվար լեռան ոտորոտում... աւելի ցած և դէպի Հիւսիս է Ագարակի եկեղեցին, որ Գուրգասւանը ⁵⁾ դարձրեց եպիսկոպոսարան, իսկ լետոյ դարձաւ Սոմխէթի արքեպիսկոպոսարան, որի իրաւասութիւնը տարածուում էր խունանի, Գարգորանի և Բեր-

¹⁾ 1229. թուին.

²⁾ Կիր. Գան. Մոսկ եր. 130

³⁾ Ստ. Օրբ. ա. հ. եր. 97.

⁴⁾ Վարդ. Բարձ. եր. 148. նաև Կիր. Գանձ. Վեմ. 180.

⁵⁾ 446—499 թ.



Ахталский монастырь. Цитадель и стены. Mon. d' Akhtala.

դուջի վրայ: Նրա կաթուղիկէն շատ ճարտարապետական ձևով է շինուած և այժմ կոչուած է Ախտալա: ¹⁾

Իսկ տեղական մի աւանդութիւն այս եկեղեցու շինութիւնը վերագրում է Հերակլ կայսրին V Պ դարում, Պարսից դէմ արշաւած միջոցին:

Այս բոլոր տեղեկութիւններէ կարելի է եզրակացնել, որ Ախտալի պղնձաձանքում հին ժամանակից. V դարից, կանգնած է եղել եկեղեցի, որի մօտ հետզհետէ շինուել են միւս եկեղեցիները, և ի վերջոյ Ս. Աստուածածին մայր եկեղեցին, Հաւանականօրէն Իւանէի ժամանակ և սրա ջանքով, երբ Թաժար թագուհու յաղթական թագաւորութեան միջոցին ճարտարապետութիւնը դարձեալ սկսել էր ծաղկել:

Եկեղեցին շինուած է սրբատաշ քարով, 13 ս. երկ. 10 ս. լայն. և 10 ս. բարձրութեան, գմբէթը չհաշուած:

Չորս ամբողջական և վից կիսասիւնների վրայ լինած ուժանական կամարներն այլ ևս չեն կրում նախկին կաթուղիկէն, որ քանդուել է դարուս սկզբում կամ երկրաշարժից և կամ Սմար խանի զինուորներից: Այլ սրա տեղը շինուած է փայտեայ կիսարտոր գմբէթ, թիթեղով ծածկուած: Իսկ կտուրը, որ հին ժամանակ լորփինով — քարէ բարակ տախտակ — էր ծածկուած, Մ. Ս. վօրօնցովի կարգադրութեամբ վերանորոգուած է և կապտադոյն կղմինտրով պատած:

Սեղանի երկու կողմը կայ մի մի խորան, որոնց մէջ կան ահագին մեծութեան տապանաքարեր. սրանցից աջակողմեան խորանի մէջ գտնուածի վրայ Մեսրոպեան Հայոց Հին և խոշոր երկաթագրով գրուած է ²⁾. ՂՄ՝ ովսէս քահանայս յիշեսջիք յաղաւթս ձեռ:

Արևելեան պատի մէջ բացուած են հինգ պատուհան, որոնցից երեքը սեղանի վրայ, իսկ երկուսը՝ խորանների մէջ: Երկական լուսամուտներ էլ բացուած են հարաւային և հիւսիսային պատերի մէջ:

¹⁾ Description géographique de la Géorgie, par le tsarévitch Wakhoucht. trad. par M. Brosset p. 143.

²⁾ Լուսայ. 1900 Գ. Ա. էր. 244.

Երեք դռնից երկուսն այժմ փակ են, իսկ արևմտեանի առաջ շինուած է երեք սիւների վրայ հանգչող կամարակապ սրահ, բիւզանդական ոճով, որի իւրաքանչիւր հարաւային մասում կամարը կրում է տարրեր զարդարանքներ, իսկ հարաւային մասում կայ մի խորան: Այստեղ մի աւազանաձև մուտք է բացուած դէպի մի ստորերկրեայ անցք, ո: այժմ կախուած է:

Երջ Աղ. Երեցեանի կարծիքով, այս խորանի մէջ պէտք է թաղուած լինին եկեղեցու հիֆնադիր Իւանէ աթարէկն ու իւր որդի՝ Աւագը:

Սրահի և եկեղեցու մէջ այժմ կան այդ տեղի կալուածատէր իշխան Մելիքովների զերեղմանները: Խորանների վերայ շինուած զաղտնի պահարանների մէջ Օմար խանի արշաւանքի ժամանակ թաքնուել են Ախտալայի թշուառ բնակիչները, սակայն նրանց հետ թաքնուած երեխաների լաց ու կոծը յայտնել են անողորմ թշնամիներին նրանց ապաստանարանի տեղը և բոլորը զոհ գնացել նրանց կատաղութեան: ¹⁾

Պատերը ծածկուած են գեղեցիկ, իւզանկար պատկերներով, որոնք մեծ մասամբ այժմ փչացած են կաթիլքից:

Այս պատկերներից ամենանշանաւորն է սեղանի վերև նրկարուած Աստուածածինը, մանկիկ Յիսուսը գրկում: Ներկերի գոյները դեռ ևս հիացուցիչ են, միայն Ս. Կուսի դէմքն ու կուրծքը բծերով ծածկուած են: Այս և սրան կից պատկերներն ու նուրբ ճարտարագետութիւնը հիացրել են «Грузія и Арменія» գրքի հեղինակ Մուրալիովին, որ այցելել է այս վանքը 1846 թուին և «Памятники византийской архитектуры въ Грузіи и Арменіи» աշխատութեան հեղինակ Գրիմմին, որ Վրաց քրիստոնէական ճարտարագետութեան ամենալաւ գործերից մինն է համարում այս: ²⁾

Եկեղեցու հիւսիսային կողմում, պատուհաններից ներքև, շինուած է մի փոքրիկ, հասարակ մատուռ, որ հաւանակահորէն վերջին ժամանակի գործ է:

Վանքից հիւսիս-արևմուտք և հիւսիս-արևելք գտնուում

¹⁾ Кавказская Старина 1872 № 1. ст. 23.

²⁾ Иосселиани. Կիշ. Кавк. Старина. 1872 г. № 1 ст. 23.

են Ս. Երրորդութեան, ս. Գիմիտրէի, Իւանէի, Բարսեղի և Գէորգայ սրբատաշ, զեղեցիկ մատուռները: Այս վերջինիս վերայ Ո. Երիցեան նկատել է վրաց Մետրոքեան տառերով գրուած մի երկար արձանագրութիւն, որ պ. Տոկաշվիլիի թարգմանութեամբ տպուեց *Сборникъ матеріаловъ для описанія мѣстностей и племенъ Кавказа* հրատարակութեան XXIX դրքի մէջ, և որի իմաստն այն է, թէ ծինամծղվար Պետրոսը շինել է այդ մատուռը սուրբ առաքեալների անունով և որոշել է, որ առաքեալների տօնին պատարագ մատուցանեն իւր հօգու փրկութեան համար: Թէև թուականը չէ գրուած, սակայն, Պ. Տոկաշվիլին քննելով արձանագրութիւնը կարծում է, թէ գրուած պիտի լինի 1242—1250 թուականների միջոցում:

Վանքի շրջապատը միայն Հիւսիսային կողմից ամրացած է բարձր պատով, և երկու բարձր աշտարակներով, որոնց մէջ բացուող լայն դարպասը՝ վանքի միակ մուտքն է կաղմում, որովհետև միւս երեք կողմերը ժայռոտ եզրերով իջնում են խոր ձորերի մէջ:

Վանքի մէջ այժմ կան մի ուսւ վարդապետ, մի յօխ քահանայ և 12 սարկաւազներ, որոնք շարունակ ժողովարարութեան են գնում, որովհետև վանքը առանձին կալուած և որոշ եկամուտ չունի:

Վանքից փոքր ինչ հեռու, դէպի Հիւսիս-արևմուտք, անտառապատ լեռան վրայ գտնւում են նախկին Սխտալա գիւղի աւերակները:

Իսկ սարալանջի վրայ կայ մի փոքրիկ բերդի և սրա հանդէպ մի փոքրիկ եկեղեցու աւերակներ: Եկեղեցու հարաւային դրան առաջ մի հրաշակերտ, ահագին խաչարձանի վրայ կարդացւում է.

Ի թվիս ՈՂԴ *) կանգնեցաւ սուրբ տէրունականս. յարեւշատութիւն Աւագին. եւ ծինամծղարութեան Պետրէի. եւ հայրապետութեան Համզասպա. եւ Յակոբ երեց կանգնեցի զխաչս ի հանգստարանի մերոյ. զիս եւ զամուսին իմ յաղաթս յիշեցէր:

*) 1245.

Ս Ի Օ Ն

Գտնուում է Բոլնիս-խաչէնից դէպի արևելք, Հազիւ կէս վերստ Հեռու: Երկարութիւնն է 10 սաժէն, լայնութիւնը՝ 5 սարժէն, և բարձրութիւնը՝ մօտ 6 սաժէն: Եկեղեցին երկու կարգ Հնգական, խաչաձև սիւներով բաժանուում է երեք մասի, որոնք ուսմանական կամարներով միանալով պահուում են իրենց վրայ թաղակապ ձեղունը: Սեղանի երկու կողմը կայ մի մի խորան, միայն երևում է, որ Հիւսիսայինը լետոյ է կառուցուած, իսկ Հարաւայինը ոչ թէ սեղանին, այլ Հարաւային պատին է կից և ունի միայն մի դուռն այդ Հարաւային պատի մէջ: Թէ Հիւսիսային և թէ Հարաւային կողմերում կան մի մի կամարակապ նախագաւիթ, որոնց միջից մի մի դուռն բացուում է եկեղեցու մէջ: Մի ուրիշ դուռ էլ բացուում է արևմտեան կողմը: Մի քանի նեղ և երկան պատուհաններ ոչ այնքան առատ լոյս են տաւում եկեղեցու մէջ:

Սրա արևմտեան կողմը, փոքր ինչ Հեռու, բարձրանում է զանգակատունը, որ մի քառանկիւնի շէնք է, գլուխը կամարակապ: Երևում է, որ մէջը մի քանի սենեակներ կան: Սրա վրայի արձանազրութիւնից երևում է, որ զանգակատունը կառուցել է Բոլնիսի եպիսկոպոս Նիկողայոսը, Մուխրանի տէր Բաշրատ Գ. որդին ՓՆ դարում: Սրան կից բոլորում է պարիսպը: Սրա շուրջը, մօտակայ բլրի լանջին կան 12 փոքրիկ, կիսաւեր մատուռներ: Եկեղեցին բոլորովին անխնամ է թողնուած:

Վախուշտի ասիլով Բոլնիսի Սիօնը մեծ տաճար է եղել, առանց դմբէթի և շինուել է V. դարի սկզբում վրաց Փարսման (408-410) թագաւորի Հրամանով: Իսկ տարեգրիւնների ցուցմունքով՝ նա դմբէթ է ունեցել և շինուել է Արշիլ թագաւորի (410-434) որդի Միհրդատի կին և Ռանի էրիստաւ Բարգաբադի դուստր Սաղուխտի կամքով:

Վախտանդ Գուրգասլանը (446-499) Սիօնը դարձրել է եպիսկոպոսանիստ, իսկ Մարիամ թագուհին (Վախտանդ Ե-ի կինը) վերանորոգել է: Բրոսսէն կարծում է, թէ այս եկեղեցին շատ Հին չպէտք է լինի և նրա շինութեան թուականը

ժՆ դարից չպէտք է անցնի: Այնուամենայնիւ Բոլնիսի ե-
պիսկոպոսը կառավարում էր ամբողջ վրացական Սոմխէթը:

Յալտնի չէ, թէ երբ է Սիօնը բարձի թողի առնուել՝ մենք
դիտենք միայն որ ժԸ. դարում Թիֆլիսի միտրապոլիտն ա-
նուանում էր Թիֆլիս-Բոլնիսեան և Բոլնիսի Հողերը նրա ան-
միջական կառավարութեան էին ենթարկում ¹⁾:

ԾՈՒՂՐՈՒՂԱԾԷՆ

Երկու Բոլնիսեաների մէջ, անտառապատ բլրի լանջի վը-
րայ բարձրանում է վերայիշեալ եկեղեցին, որ 15 արշ.
երկարութիւն, 10 արշ. լայնութիւն և մօտ 7 սափէն
բարձրութիւն ունի և շինուած է կարմիր, տաշած քարից:
Երկու ամբողջական և չորս կիսասիւնների վրայ բոլորում են
արարական կամարներ, կրելով իրենց վրայ տասն պատուհա-
նով զարդարուած գլանաձև, բարձր կաթուղիկէն: Սեղանի եր-
կու կողմը կան մի մի երկյարկանի խորաններ, կլոր պատու-
հաններով: Սեղանի մէջ տեղը մի մեծ և կողքերին մի մի
փոքր, նեղ և երկար պատուհան կան: Հիւսիսային և հարաւային
կողմերում ևս կան մի մի նոյն երկարութեան խորաններ, ո-
րոնցից հարաւայինը արդէն քանդուած է: Հարաւային և
արևմտեան կողմը կան մի մի դուռն, շատ զեղեցիկ քանդակ-
ներով զարդարուած: Արևմտեանի վերև մի խաչ է քանդա-
կուած, կողքերին մի մի քանդակազարդ պատուհան:

Արևելեան ճակատը երկու ներսանկուած ունի: Թէ դըռ-
ների և թէ պատուհանների շուրջը պատող քանդակները
միանգամայն հիանալի են:

Վանքը սլարոպապատ է, մի մեծ, զեղեցիկ քանդակնե-
րով զարդարուած դռնով: Պարսպի մէջ կան խցերի տեղեր և
զերեցմաններ: Այժմ բոլորովին անխնամ է թողնուած:

Արևմտեան պատի վրայ վրացերէն մի արձանազրութիւն
կայ, որի իմաստը հետևեալն է. թագաւորաց մեծ թագաւոր

¹⁾ Vachouscht, քիշ. գիրքը եր. 145,

²⁾ Барпаџе. քիշ. գիրքը եր. 162.

Գէորգի թագաւորութեան միջոցին, ես, Արսէնի որդի Ասլանս սկսեցի իմ կալուածքիս մէջ այս եկեղեցու շէնքը իւր գմբէթով 'ի փառս Աստուծոյ: Բրտսսէն կարծում է, թէ այս արձանագրութեան մէջ լիշուած Գէորգ թագաւորը ՓՆ. դարի Գէորգ Փառահեղը պիտի լինի: ¹⁾

ԱՆՅԱՅՑ ՄԵՆԱՍՏԱՆՆԵՐ

Գորուրէտի գիւղից մօտ մի վերստ հեռու, Սաթխէ անտառապատ լեռան լանջին, մի փոքրիկ հարթութեան վրայ բարձրանում է կօփածոյ քարերից շինուած մի շատ գեղեցիկ եկեղեցի: Սրա երկարութիւնն է 20 արշ. լայնութիւնը 8 արշ. և բարձրութիւնը՝ մօտ 7 սաժէն: Ձեղունը և հարաւային պատը բոլորովին քանդուած են:

Արևմտեան կողմում կայ գեղեցիկ նշխերով եզրափակուած և կամարակապ դուռն, որի վերև կայ շղթայով մի քարից կապած առիւծի ուլիէֆ պատկեր: Փոքր ինչ բարձր 5 արշին երկարութեան մի քերուրաքանդակ, հրաշալի խօչ, շրջանակով. սրա երկու կողմը մի մի կամարակապ և նշխերով եզրափակուած, քառորդ արշին լայնութեան և 2 արշին երկարութեան պատուհան, որոնցից ձախի տակ կայ մի քահանայի, գիրքը ձեռին, և մի երեխայի ուլիէֆ պատկեր, իսկ աջ պատուհանի տակ ձեռները վերև պարզած մի երեխայի ուլիէֆ պատկեր:

Հիւսիսային կողմը ևս կայ մի դուռն, կամարակապ և շատ գեղեցիկ նաշխերով եզրափակուած, վերևը մի կլոր պատուհան:

Այս դռան մօտից, հիւսիսային պատին կից կայ մի խորան:

Ներքուստ եկեղեցին անսիւն է, սեղանը բոլորակաձև և ձախ կողմը մի արշ. լայնութեան և մի սաժէն երկարութեան խորան ունի: Սեղանի շուրջը պատին նկարուած են 12 առաքեալների պատկերները, որոնց վերև կայ մի նեղ և երկար պատուհան:

¹⁾ Кавказъ въ древнихъ памятникахъ Христианства ст. Баградзе. с. 43. въ Запискахъ Общ. любителей Кавказской археологии. Кв. I.

Եկեղեցին պարսպապատ է, աշտարակներով ամրացած. պարսպին կից կայ մի ընդարձակ, կիսաւեր դաշլիճ, և խցեր: Եկեղեցու շուրջը կան զերեզմաններ:

Թէ եկեղեցու և թէ զերեզմանների վրայ զեր չկայ, ուստի և լայտնի չէ թէ ումնից և երբ է կառուցուել, միայն եկեղեցու լատակազծից երևում է, որ վրաց պետի լինել և ժողովուրդից Սամէրա, Երրորդութիւն, է կոչում:

Պարսպից դուրս կան տնատեղեր, ձորի մէջ հոսում է Սաթխէ վտակը, որ թափոււմ է Մաշաւեր գետակի մէջ:

Եյս մենաստանից մօտ երեք վերտո հեռու, նոյն անտառի մէջ, մի փոքրիկ հարթութեան վրայ կայ մի ուրիշ վանք, որ պարսպապատ է: Եկեղեցին առաջնից փոքր է, 18 արշ. երկ. 7 արշ. լայնութեան և մօտ 6¹/₂ ս. բարձրութեան: Ձեղունը բոլորովին քանդուած է: Չորսական կիսասիւնների վրայ բոլորում են ումանական կիսակամարներ, որոնցից իւրաքանչիւրի մէջ բացոււմ է մի մի երկար և նեղ պատուհան: Սեղանը բոլորակաձև է, մէջ տեղում մի նեղ և երկար պատուհան, իսկ կողքերին մի արշ. լայնութեան և 2 արշ. երկարութեան մի մի փոքրիկ խորան, մի մի կլոր պատուհանով: Հիւսիսային պատին կից կայ մի փոքրիկ խորան, որ մի դռնով միանում է եկեղեցու հետ: Հարաւային կողմում մի գաւիթ կայ, կամարակապ և դուռը շատ զեղեցիկ քանդակներով զարդարուած:

Երևմտեան կողմը ևս կայ մի հասարակ դուռն, որի վերև եղած խուցուրի արձանազրութիւնից երևում է, որ դռնէ գաւիթը շինել է Յովհան Մանգլիշի (Մանգլիսի եպիսկոպոսը) Գէորգ Փառահեղի ժամանակ (XV դ.):

Հ Ն Է Վ Ա Ն Ք

Ճարտարագետական տեսակէտից այս, բաւական նշանաւոր վանքն բարձրանում է Կուրթանի ձորում, Պալըղ-չայ գետի աջ կողմում, մի եռանկիւնաձև բարձրութեան վրայ: Չինուած է կարմիր, սրբատաշ քարից: Գլխաւոր եկեղեցին խաչաձև է, անսիւն, ռոմանական կամարներով և գլանաձև կաթուղիկէով: Ունի մի սեղան և երկու խորան: Արևմտեան կողմին կից բարձրանում է սիւնազարդ գաւիթը, երեք փոքրիկ գմբէթով, որոնք այժմ բոլորովին քանդուած են: Գաւթի հարաւային, կամարակապ դռան վերև կայ վրաց խուցուրի տառերով մի արձանագրութիւն, որ չկարողացայ ընդօրինակել:

Սրա արևմտեան, արևելեան և հարաւային կողմերում կան նաև մի մի ընդարձակ շէնք, որ յայտնի չէ, թէ ինչ են եղել: Հանդիպակաց ժայռերի մէջ կան բաւական թուով այրեր:

Գրականութեան մէջ այս վանքի մասին տեղեկութիւններ չկարողացայ գտնել, գուցէ բոլորովին չկան: Հայ ժողովուրդը Հնէվան ասելով բացատրում է իբր Յունաց վանք:



Греко-грузинская церковь. *Ἐκκλησία.* Eglise gréco-géorgienne.